Ամբիոնի մասին

Ամբիոնում դասավանդվում են մասնավոր իրավունքի ոլորտին առանչվող շուրջ 10 առարկա, ինչպես նաև, ՀՀ քաղաքացիական դատավարության իրավունք, առարկան, որոնք ներդրված են ակադեմիայի իրավագիտության և հեռակա ուսուցման ֆակուլտետների բակալավրիատի, քոլեջի ոստիկանական միջին մասնագիտական կրթության ֆակուլտետի ու կրթահամալիրի վերապատրաստման կենտրոնի ուսումնական ծրագրերում:

Ամբիոնն ակտիվորեն ներգրավված է գիտական կադրերի պատրաստման աշխատանքներում, մասնակցում է մասնավոր իրավունքին և քաղաքացիական դատավարությանն առնչվող տարաբնույթ գիտական միջոցառումների:

Ամբիոնը մասնագիտական կարծիքներ է տրամադրում ՀՀ ոստիկանության կրթահամալիր ներկայացվող և իր գործունեության ոլորտին առնչվող նորմատիվ և այլ իրավական ակտերի նախագծերի վերաբերությամբ:

Քաղաքացիական իրավունքի կամ քաղաքացիական դատավարության ամբիոնն իրականացնում է Մասնավոր իրավունքի և քաղաքացիական դատավարության ուսանողական գիտական խմբակի գործունեության կազմակերպման աշխատանքները:

2014-2021թթ. ամբիոնը հրատարակել է 2 տասնակից ավել գիտական, ուսումնական ու մեթոդական աշխատանքներ:

Ամբիոնի հաստիքային աշխատողներն են Գևորգ Իսրայելյանը՝ ամբիոնի պետ, Գայանե Մարուքյանը՝ ամբիոնի դոցենտ, Անժելա Տոնոյանը՝ ավագ դասախոս: Ամբիոնում համատեղության կարգով և պայմանագրային հիմունքներով դասավանդում են նաև բարձրակարգ մասնագետներ: